ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԱՀԱԼՆԵՐՆ ՈՒ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ

1805 թ. Իբրահիմ խանը իրեն ճանաչեց Ռուսաստանի կայսեր հովանավորության ներքո անցած և իր երկիրը ռուսական պետության հետ միացած։ 1813 թ., Գյուլիստանի դաշնագրությամբ, պարսից կառավարությունը տվավ այդ կատարված փաստին իր իրավական վավերացումը, սակայն այնուհետև էլ Ռուսաստանին նոր միացած երկրում շարունակեց կիրառվել հին խանական վարչական ավանդական կարգը, թեև չափազանց խախտված՝ ռուսական զինվորական և մասամբ նաև քաղաքացիական պաշտոնատարների ամենառաջ միջամտությամբ։ Այս ճշմարտությունը և իրավասության անընդհատ կրճատումը, ինչպես հայտնի է, հարկադրեցին Մեհտի-Ղուլի-խանին 1822 թ. թողնել Շուշին և փախչել Պարսկաստան։ Խանությունը վերածվեց պրովինցիայի, երկրի կառավարությունը հանձնվեց կոմենդանտին։ Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում փախած խանը երկրից՝ սրանք պիտի այնուհետև մտնեին ռուսական պետական գանձարանը։ Այդ բարդ և պատասխանատու աշխատանքը հանձնվեց երկու անձից բաղկացած մասնաժողովին։ Մեկն էր իսկական պետական խորհրդական՝ (действительный статский советник) Մոգիլևսկին, մյուսը՝ գնդապետ Երմոլով 2-րդը։ Նրանցից առաջինն իր նախկին գործունեությամբ լավածանոթ էր նկարագրվող երկրին։ Զարմանալի արագությամբ նրանք ի կատար ածեցին ստանձնած հանձնարարությունը և արդեն 1823 թ. ապրիլին ներկայացրին Կովկասի վարչապետ Երմոլովին Ղարաբաղի պրովինցիայի մահալների նկարագրությունը[1], որտեղ ցուցակագրված են բոլոր բնակավայրերը, նրանց մեջ բնակվող ընտանիքների թիվը, նրանցից քանիսն ինչո՞ւ են ազատված եղել պետական տուրքերից և մնացածներից ո՞րքան (ծուխ) ընտանիք և ի՞նչ անվան տակ տուրքեր էին վճարում խանին և նրա միջոցով որպես հարկ՝ գանձարանին։ Հավաքված տեղեկությունները գաղափար են տալիս նաև Ղարաբաղի խանության մի մասը կազմող, այժմյան Զանգեզուրի ազգաբնակության թվի և ազգային բաշխման, ինչպես և բնակավայրերի բնույթի մասին և պատկերում են այդ գավառի մահալական բաժանումն և իշխող վարչական ձևը։

Երկիրը բաժանված է եղել մահալների, որոնց գլուխ կանգնած էին մեծ մասամբ մելիքներ՝ մինբաշի-հազարապետ կամ յուզբաշի-հարյուրապետ տիտղոսներով։ Մահալի մեջ առանձին գյուղերը կամ գյուղախմբերն ունեին իրենց մասնավոր մելիքական տները։ Բացի այդ՝ խոշոր կալվածատերերը վարողանում էին անտես առնելով մահալի մելիքին՝ անմիջապես կապված լինել խանի հետ և հաճախ մահալում ավելի ազդեցություն ունենալ, քան մահալի մելիքը։ Այդպիսի ուժեղ կապեր ունեցող կալվածատերերիցն էր օրինակ՝ Ղասում-բեկի ընտանիքը[2], որից մի որդին՝ Հաջի-Աղալար-բեկը, սեփականա-

---

[1] «Описание Карабагской провинции», составленное действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым.

[2] Այս Ղասում-բեկն, ըստ Մելիք-Բարխուդարյանների մասին տեղում պահպանված ավանդության, գողացել էր Տեղի Մելիք-Բարխուդարի ընտանիքից մելիքական և կալվածատիրական իրավունքների հաստատման վավերագիրներն ու փախցրել մելիքի օրինական ժառանգ Դավիթ-բեկից գժտված Իբրահիմ-խանի մոտ և թղթերը նրան հանձնել։ Խանը նրան է տվել Տեղ գյուղը։ Ալայեան Ե., Զանգեզուր, էջ 13։